9․ կատ ար իչ քն ահնի ի տե խա փ ան ողք
(տեղ կայ)

10․ ․․?ա դա տի ն յԱյ․

---

ԾԱՆՕԹ․— Գրուած է վատ եւ անսովոր կցումներով, որ ԺԴ․ դարումն է երեւան գալիս, հազուագիւտ ԺԳ–ի վերջում․ երբեմն բառի վերջին տառը կցուած հետեւեալի առաջնի հետ կամ վանկերի վերջին եւ առաջին տառերն իրար կցուած անյարիր կերպով։ Տես երկրորդ տողի մէջ «Թոռ նամիր», երրորդ տողի մէջ «էաչոե ւ կենակիցնի մխոնադղէն», եօթներորդ տողի մէջ «ի մե դքաւրն» եւն․։ Այսպէս էր եւ նախընթացը։

Ջալ․ Բ․ 211․ պակաս եւ սխալներով։ Ալիշ․ Սիսակ․ 122, նոյնպէս։

Ouv. Arx. Kavk. XIII. չունի։

*Պատկերի տակ տպուած է Ա․ 27 փոխ․ 26։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա․ 27

Ա․ Գրքի եր․ 206/7, 208․ պատկ․ 93․

### ՍՊԻՏԱԿԱՒՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

(Հիւսիսային պատի վերայ ներսը)

1․ Յ ու սով նո ր (s! առԾ (առ աստուած) ես ամ իր Հաս ան որ դի

2․ էաչո ես Բորա դ ստ Ջաք ար աի մեր հ ար են

3․ եցն ի Խսա որ ալէզ* զն ախ ազ պարենց (ց կասկածելի)

4․ Ջահենենց այգ ին զԴթենց այգ

5․ այտե դի ն կէ սն տվաք սբ անապիս եւ Գրի

6․ գ որ լն գերեզ մանի ս ի ձեռն հայր Մ կչի

7․ մեծ յուսով յիշա տակ մեզ եւ Նախն

8․ եցն մերոց սբ հայրս եւ մի աբ անք

9․ կարգեցին տար են (s!)։ դ։ ալր պատար

10․ ւագ Եչ եւ զատկի կ(իւրակէն?)

---

*Սոխտրլիս անունով մի գիւղ, յիշուած 1671 թուին, արդեօք կապ ունի այս անուան հետ, դժուար է ասել․ Ջալ․ Ա․ 140։

Արձանագրութիւնը չատ երես է փորագրուած, քարն էլ անյարմար․ մեծ մասով գծերը նորոգուած են հնի վերայով։ Բարդութիւններն ու գրերն էլ տարօրինակ, արձանագրական փորագրութեան անկման շրջանին յատուկ։

Լալ․ 77․ չունի հանած առաջին տողը։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա․ 28․

Ա․ Գրքի եր․ 207, պատկ․ 93․

### ՍՊԻՏԱԿԱՒՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

(Հիւսիսային պատի վերայ, անմիջապես Ամիր Հասանի արձանագրութեան տակ)

1․ Յ ու սովն որ առԾ (առ Աստուած) ես Բոքես Ջառ աւե տկ

2․ անց այգին որ իմ հալ (s!) գնուածք էր ավլի

3․ յանապ ատ ն Սպի տա կաւոր Ածածիս (s!) իմ

4․ հոգոյ բա ժի ն ի ձեռ նաք հար Մ կչին

5․ եւ սբ հայն (s!) եւ մի աբ անքս գրեցին փո

6․ խ մա ն ածածին։ բ։ պատ ար ագ

7․ ի Թվս ՉՁԹ յամէն խ ար ճէ ազ ատ հակ

8․ առակն դատի յայ․

---

ԾԱՆՕԹ․— Արձանագրութեանս մէջ առաջին տողում Բոքէս ընդգծուած տառերը կիսով չափ փչացած եւ անընթեռնլի․ բայց սոյն արձանագրութեան գլխին եղած Ամիր Հասանի արձանագրութիւնից կռահւում է, որ Բոքէս պէտք է լինի։ Այս արձանագրութեան լուսանկարը չունիմ ամբողջապէս, այլ միայն երկու տողը նախընթաց արձանագրութեան հետ։

Արձանագրութիւնը գտնւում է հիւսիսային պատի վերայ, Ամիր Հասանի արձանագրութեան տակ։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա․ 29ը ՉԿԱՅ

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա․ 30․ ՊԱԿԱՍՈՒՄ Է

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա․ 31․

Ա․ Գրքի եր․ 209 եւ 231․

### ՍՊԻՏԱԿԱՒՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

1․ Կամաւն այ ես Պարսամ աբեղայ մի/ այբանեցա սբ անա

2․ պիս զաղբրափոսն/ այգի տեկեցի (s!) յաուն (s!) սբ ածա

3․ ծխս/ եւ տվի արձանայգրով իմ յիշատակն հվ?/ ի

4․ մոցն միաբանք սահմանեցին բ։ ժամ յամէ/ ածածնի

5․ հակառակն զՈւղաին զԿաեն/ին առցէ։ Թվ։ ՉՋ։

Սորա գլխին․ «Ջպարոն Խոնաք/արն յի/ չեցէք ի Քս Թվ ՊԾԲ (Թէ ՊՋԲ)։ Ա․ Գրքի եր․ 231․

---

ԾԱՆՕԹ․— Քաջբերունի․ Արար․ 1889․ 5 ։ Ալիշան․ Սիսակ․ 138։ Երկուսն էլ «սբ անապիս զաղբրափոսն»